34727

ԱՐԳԱՐԻԱՆՑ

ԿՏԱԿԱԳԻՐԸ

1900

34722

ԹՂԹԱԴՐՈՇՄ ՌՈՒՓԻԻՔ 130 —

Այս դաշնագրութիւնը կնքուած մի հազար ութն հարիւր իննսուն և իններ Դեկտեմբերի քսան և միերրորդ օրուայ մէջ, Յարութիւն Գրիգոր Աբգարեանի և Աբգար Աղէքսանդր Աբգարեանի՝ երկուքը ևս Կալկաթացի, որոնք գործ են վարում միմեանց ընկերակցութեամբ, № 19 Ռադհա բազար փողոցում Կալկաթա քաղաքի մէջ՝ Աբգար և Ընկերութիւն անունով (այսուհետև կը կոչուին Հրիտակողներ) մի կողմից և Պ. Ալբերտ Բըրմինգհամ Միլլը Կալկաթացի Բէնգալայի Օրինական Աւանդապահն (յետ այսու կը կոչուի Օրինական Աւանդապահ, այս անունը ըստ հանգամանաց կը պարունակի իւր յաջորդները պաշտօնի մէջ) միւս կողմից, որովհետև Հրիտակողները այսուհետև յիշուած պաշտօնական Աւանդապահին փոխանցած ժամանակում քսան և վեց հազար Ռուփեաց Կառավարութեան արժէթղթեր ունէին. որպէս յիշուած է այս ընծայագրի առաջին յաւելուածի մէջ՝ վերաբերմամբ քսան և երեք հազար Ռուփեաց արժէթղթերին, որը բացարձակապէս իրենց է վերաբերում և իրենց սեպհականութիւնն է, և մնացած երեք հազար Ռուփեաց արժէթղթերը ներկայացնելով այն գումարը՝ որ հանդուցեալ Յարութիւն Աբգար—Աւագը ցանկացած էր որ իւր կենդանի մնացող ընկերները, որոնց վերջինն է յիշեալ Յարութիւն Գրիգոր Աբգարեանը, որ այնպէս ապահովուի ինչպէս որ յետագայում յիշուած է, և որովհետև Հրիտակողները ցանկացել են արժէթղթերը յանդի դնել Օրինական Աւանդապահի մօտ, ինչպէս որ յետագայում յիշուած է նոյնի վերաբերմամբ— Ի փառս Աստուծոյ և ի յիշատակ այն անձինքների որոնց անունները յիշուած և նկարագրուած են որա երկրորդ յաւելուածի մէջ, որպէս երախտագիտութիւն և շնորհակալութիւն ստացուած օգուտների համար, Օրինական Աւանդապահից խնդրել և նա ևս ընդունել է յիշեալ արժէթղթերը պահել նոյն աւանդի վերայ, և որովհետև յիշեալ արժէթղթերը նոյնպէս փոխադրուած և յանձնուած են Օրինական Աւանդապահին, ինչպէս որ նա սովաւ ընդունում և խոստովանում է և որովհետև հրիտակողները և Օրինական Աւանդապահը կարգադրել են իրենց մէջ որ Օրինական Աւանդապահը պէտք է յիշեալ արժէթղթերի մանրամասնութիւնները մտցնէ իւր տօմարների մէջ՝ այս վերտառութեամբ "զթութեան Աւանդ Յարութիւն Աբգարի Աւագ և Գրիգոր Աբգարի—Աւագ,, և թէ յիշեալ աւանդը յետ այսու ճանաչուի և որոշուի այդ մտքով, և որովհետև յիշեալ արժէթղթերի արժէքը ի միասին քսան չորս հազար ինն հարիւր և վաթսուն Ռուփուց աւելի չէ, թուականիս օրուայ հրապարակի մէջին հաշուով արժէքի համաձայն, այժմ այս Դաշնագրութիւնը վկայում է և սովաւ ընդունուած և յայտնուած է հետևեալը—

ՀԱՅԿԱԶՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Օրինական Աւանդապահը կը տիրանայ յիշեալ Կառավարութեան արժէքներին, վասն քսան վեց հազար Ռուփեաց առաջին յաւելուածի մէջ յիշուած, հետևեալ բանդերի վերայ, այսինքն աւանդի վերայ գոյացնելու և ստանալու յիշեալ արժէքներից ձեռ եկեալ մուտքը կէս ամեայ և ենթակայ իւր կումիսանի զեղչման, և յիշուած կիսամեայ մուտքը երեք հաւասար
Ա մասերի բաժանել և այս աւանդի մուտքի մի հաւասար երրորդ մասը վճարել ամեն կիսա-ամին Կալկաթայի Նազարեթայ Հայոց Եկեղեցու եկեղեցականներին կամ այն ժամանակուայ մասնախմբին՝ կարգուած համաձայն կանոնադրութեան հաստատուած Կալկաթայի բարձրագոյն Դատարանի հրամանով, թուեալ Սեպտեմբերի երկրորդ օրը, մի հազար ութն հարիւր և ութսուն և ինն. 1888 թուականի № 413 դատավարութեան մէջ, այսպիսի այս մուտքը
Բ յիշեալ Եկեղեցականների կամ Մասնախմբի ձեռքով պէտք է գործ ածուի այն ձևով որ յետ այսու պիտի յիշուի, և միւս մի երրորդ հաւասար մասը այս աւանդի մուտքին պէտք է որ միևնոյն կիսա-ամին Բենգալայի դրամատան և կամ ոևէ ուրիշ առաջին կարգի դրամատան փոխանակագրով փոխանցուի
Գ Զուղա Պարսկաստանի մէջ՝ հինգ հոգուց բաղկացած Յանձնաժողովին, որը պէտք է ընտրուի այսուհետև յիշուելիք ձևով, այս մուտքը պիտի գործ ածուի այդ Յանձնաժողովի ձեռամբ այն ձևով որը այսուհետև կը յիշուի։ Իսկ յաւանդի դրուած մի հաւասար երրորդ մասի մուտքը պէտք է որ միևնոյն կիսա-ամին փոխանցուի Զուղայի Մեյդան թաղի Սուրբ Մարիամի Հայոց Եկեղեցու այն ժամանակուայ Եկեղեցականներին և Քահանաներին, և ի դէպս եթէ որևէ ժամանակում յիշեալ Եկեղեցու գոյութիւնը դադարի, յաւանդի դրուածը փոխանցել Օրինական Աւանդապահի ընտրողութեամբ Զուղայի մի այնպիսի Հայոց Եկեղեցու Եկեղեցականներին՝ և Քահանաներին որ կը գտնուի բոլոր Ուղղափառ Հայոց Կաթուղիկոսի Հոգևոր իշխանութեան ներքոյ, ինչպէս որ Օրինական Աւանդապահը ժամանակ առ ժամանակ կը վերջաւորի, այս մուտքը պէտք է գործ ածուի այսպիսի Եկեղեցականների և Քահանաների ձեռամբ այսուհետև յիշուելիք ձևով։

Ա 2. Կալկաթայի Նազարեթայ Հայոց Եկեղեցու Եկեղեցականներն կամ Յանձնաժողովն պիտի գանձեն այն բոլոր դրամները, որոնք կը վճարուին իրենց Օրինական Աւանդապահի ձեռքով, ինչպէս որ արդէն յիշուած է, մի որոշ և առանձին հաշուով յիշատակուած Եկեղեցու տօմարների մէջ և պէտք է որ նոյն տեղում մտցնեն երկրորդ յաւելուածում յիշուած և նկարագրուած բոլոր անձինքների անունները և ի յիշատակ այդ անձինքների այնպիսի թուականներում որ յիշեալ Նազարեթայ Հայոց Եկեղեցու Քահանաները կը որոշեն պէտք է որ ամենայն տարի ծախսեն քսան և հինգ Ռուփեաց մի գումար մի ընթրիքի համար, որ պիտի տրուի Կալկաթայի Նազարեթայ Եկեղեցոյն բակին մէջ, կամ մի ուրիշ առանձին տեղում, Կալկաթայի Հայոց Աղքատանոցի բնակիչներին և կամ ուրիշ Հայ աղքատներին Կալկաթայում և պէտք է որ վճարեն և բաշխեն նաև ի յիշատակ երկրորդ յաւելուածի մէջ

յիշուած անձինքների՝ Օրինական Աւանդապահի կողմից իրենց վճարած մնացորդ դրամի կէսը Կալկաթայի Հայ հասակաւոր աղքատներին և կամ Կալկաթայի Հայ որբերին մէջ, երկու առիթներում ամենայն տարի, այսինքն Հայերի Ծնունդի շաբաթուայ մէջ և Հայերի Զատկի Աւագ շաբաթի նախորդ շաբաթուայ մէջ և պէտք է որ ի յիշատակ յիշեալ անձինքների Օրինական Աւանդապահի իրենց վճարած դրամի մնացածն ևս վճարեն Կալկաթայի Նազարեթայ Հայոց Եկեղեցու այնպիսի Քահանաներին որոնք որ աղքատ և կարօտ վիճակի մէջ գտնուում լինին, որպէս զի այդպիսիները կարողանան իրենց պարտքերը վճարեն (եթէ ունենան) կամ իրենց պատսպարեն և կամ Զուղայից և կամ ուրիշ տեղից իրենց Կալկաթա գալու ծախքը վճարեն։

Բ 3. Յիշուած հինգ հոգուց բաղկացած Յանձնաժողովի չորս անդամներն (որոնցից մինը եթէ հնարաւոր՝ երկրորդ յաւելուածում յիշուած Աբգար Աղազար Սէթի ներուանդից լինի) պէտք է որ ընտրուին մի ընդհանուր ժողովով, որը պիտի տեղի ունենայ ժամանակ առ ժամանակ, երբ հարկ լինի, այդ նպատակաւ վերոյիշեալ Զուղայի բոլոր Հայ հասարակութիւնից բաղկացած, որոնք բոլոր Ուղղափառ Հայերի կաթուղիկոսի հոգևոր իշխանութեան տակ են գտնուում, այդ ժողովի մէջ նոյն հասարակութեան Քահանաներն ևս իրաւունք պիտի ունենան ներկայ գտնուելու և քուէ տալու։ Յիշուած Յանձնաժողովի մնացած անդամն ևս Զուղայի Ս. Մարիամ Եկեղեցու նոյն ժամանակուայ Աւագ- Քահանան պիտի լինի և եթէ որ և է ժամանակում Ս. Մարիամ Եկեղեցին գոյութիւն ունենալուց դադարի Զուղայի մէջ և նոյն հոգևոր իշխանութեան տակ գտնուող մի ուրիշ Հայոց Եկեղեցու նոյն ժամանակուայ Աւագ Քահանայն պիտի որոշուի յիշեալ Յանձնաժողովի միւս անդամների կողմից։ Յիշուած Յանձնաժողովի երկու կամ աւելի անդամները պիտի մեծամասնութիւն կազմեն և երբոր յիշեալ Քահանան նոյն ժամանակումը իւր պաշտօնի զօրութեամբ, որպէս նոյն Յանձնաժողովի անդամ ներկայ կը լինի, նա պէտք է որ նոյն ժողովին նախագահէ։

4. Երրորդ պարբերութեան մէջ յիշուած Յանձնաժողովը պէտք է որ վերևի յօդուածի համաձայն Օրինական Աւանդապահից գանձէ բոլոր դրամները, մի որոշ և առանձին հաշուով և պէտք է որ նոյն տեղում մտցնէ երկրորդ յաւելուածի մէջ յիշուած և նկարագրուած բոլոր անձինքների անունները, և ի յիշատակ նոյն անձինքների պէտք է վճարէ և բաշխէ այդ դրամները Զուղայում գտնուող առ և ի մէջ հասակաւոր Հայ աղքատների և կամ նոյն քաղաքի Հայ որբերին։

Գ 5. Յիշեալ Զուղայի Սուրբ Մարիամ Հայոց Եկեղեցու Եկեղեցականներն և Քահանաները պէտք է որ վերի յօդուածի համաձայն Օրինական Աւանդապահից գանձեն բոլոր դրամները, և մի որոշ և առանձին հաշիւ պահեն

իրենց Եկեղեցւոյ Տօմարների մէջ և որի մէջ պէտք է մտցնեն երկրորդ յաւելուածի մէջ յիշուած և նկարագրուած բոլոր անձինքների անունները և ի յիշատակ նոյն անձինքների՝ պէտք է որ Օրինական Աւանդապահի կողմից իրենց վճարուած դրամի կէս մասը գործ ածեն իրենց Եկեղեցւոյ լուսաւորութեան և կամ եկեղեցական զգեստների նորոգութեան և կամ մանր ծախուց համար և մնացած միւս կէս մասը յիշեալ դրամների՝ պէտք է բաժանեն իրենց նոյն Եկեղեցւոյ նոյն ժամանակուայ Քահանաների մէջ, որոնք կախում ունին իրենց ժողովրդի կամաւոր տուրքերին։

6. Բացի Ս. Մարիամ Եկեղեցուց որ և է ուրիշ Եկեղեցւոյ Եկեղեցականներն և Քահանաներն որոնք այն ժամանակ իրաւունք պիտի ունենան յիշեալ յաւանդի դրուած դրամի մուտքի մի մասը ստանալու պէտք է որ իրենց ստացած դրամները գործադրեն այն եղանակաւ՝ որը յառաջ է բերուած հինգերորդ պարբերութեան մէջ, որպէս թէ իրենց Եկեղեցւոյ անունը նոյն պարբերութեան մէջ մտցրուած լինէր, յիշեալ Ս. Մարիամ Եկեղեցւոյ փոխարէն։

7. Մի կամ աւելի անձինքների ստացականը կամ ստացականները՝ որոնք առժամանակապէս իրաւունք պիտի ունենան ստանալու Օրինական Աւանդապահից յաւանդի դրուած դրամի մուտքի մի մասը. նոյն բանի համար, Օրինական Աւանդապահին ազատ պիտի կացուցանեն և Օրինական Աւանդապահը պարտաւոր չէ տեսնելու սոյն մուտքի գործադրումը, միայն թէ սովաւ յայտարարւում է որ Օրինական Աւանդապահը որ և է ժամանակում կամ ժամանակներում ազատ պիտի լինի իրեն յատուկ բացարձակ ընտրողութամբ յապաղել կամ դադարեցնել յաւանդի դրուած դրամի մուտքի որ և է մասի վճարումը այն անձինքներին, որոնք առժամանակապէս իրաւունք ունին ստանալու, եթէ նրանք զլանան գործադրել սորա մէջ պարունակուած որ և է մի կանոնը կամ դաշինը՝ յիշեալ դրամների բաշխելու ժամանակում, մինչև որ այդ կանոնները կամ դաշինները առանձինն գործադրուին, կամ մինչև որ քանի ուրիշ անձինք Օրինական Աւանդապահի հաւանութեամբ ընտրուին՝ յիշեալ մուտքը ստանալու համար, միայն թէ Օրինական Աւանդապահի համար օրինաւոր կը լինի, բայց ոչ պարտաւորիչ իրեն բացարձակ ընտրութեամբ՝ կանոնները դրժուած լինելու հետևանքով իրեն մօտ պահուած ամբողջ դրամները կամ մի մասը վճարելու այն անձինքներին որոնք իրաւունք ունին յիշեալ յաւանդի դրուած դրամի մուտքի մի մասը ստանալու (իրենց վճարուած միւս դրամների հետ միասին աւանդի համեմատ գործադրելու համար) այնքան ժամանակ որ յիշեալ կանոնազանցութիւնը շարունակուում լինի կամ մինչև որ ուրիշ անձինք ընտրուին, ինչպէս վերը յիշուած է, ի տեղի այն անձինքների՝ որոնք կանոնազանց էին գտնուած, և սովաւ որոշակի յայտարարւում է որ առանձին հաշիւ չպահելն — ինչպէս վերը յիշուած է, և երկրորդ յաւելուածի մէջ յիշուած և նկարագրուած անձինքների անունները՝ նոյնի մէջ չը մտցնելն պիտի նկատուի որպէս կանոնազանցութիւն,

և եթէ մի այսպիսի բնաւորութիւն ունեցող կանոնազանցութեան դէպքի մասին Օրինական Աւանդապահը տեղեկութիւն ստանայ, նա պէտք է յապաղեցնէ վերստին վճարումը յիշեալ յաւանդի դրուած դրամի մուտքը, որի մասին կանոնազանցութիւն տեղի ունեցած լինի և որի փոխարէն պիտի վճարէ միւս անձինքներին, որոնք իրաւունք ունին յիշեալ յաւանդի դրուած դրամի մուտքի մի մասը ստանալու և յիշուած եղանակաւ գործադրելու։

8. Օրինական Աւանդապահը չը պիտի վճարէ յիշուած յաւանդի դրուած դրամի կիսամեայ մուտքի մասն այն անձինքներին որոնց որ վճարելի է, մինչև որ նա՝ Օրինական Աւանդապահը ստացած լինի նախորդ կիսամեայ մասերի ստացականները։ Աւանդի վերայ դրուած վճարելի բոլոր դրամների ստացականները պէտք է որ «Գթութեան աւանդ Յարութիւն Աբգարեանի-Աւագ և Գրիգոր Աբգարեանի-աւագ» վերտառութիւնը կրեն։

9. Իդէպս, եթէ որ և է ապագայ ժամանակում կամ ժամանակներում Օրինական Աւանդապահը չը պիտի կարողանայ (որանից առաջ յայտարարուած աւանդի կամ աւանդների որևէ մինը գործադրել, այսպիսի աւանդի կամ աւանդների առարկաների առժամանակապէս գոյութիւն չունենալուն պատճառաւ, Օրինական Աւանդապահը պէտք է (բայց այնպիսի ժամանակում միայն, երբ վերոյիշեալ առարկաների այսպիսի գոյութիւն չունենալը շարունակում կը լինի) գոյութիւն չունեցող առարկայի համար աւանդի դրուած դրամի մուտքը գործադրէ և բաշխէ յետագայում նշանակուած մի կամ միւս եղանակաւ, այսինքն Հնդկաստանի որևէ մասի մէջ գտնուած հասակաւոր աղքատ Հայերինև կամ Հայ որբերի մէջ; Կալկաթայինը կամ Պարսկաստանինը դերադասելի, եթէ այսպիսի հասակաւոր աղքատ Հայեր և Հայ որբեր ևս չը լինին որ և է ուրիշ հասակաւոր աղքատ Հայերի և կամ Հայ որբերի մէջ. այսպիսիք ևս եթէ չը լինին՝ Կալկաթայի որ և է դաւանութեան վերաբերելի քրիստոնեայ աղքատների մէջ։

10. Իդէպս, եթէ վերևում յիշուած աւանդի դրուած դրամի մուտքի որևէ մի մասն ընդունակ դատարանի կողմից անվաւեր ճանաչուի, Օրինական Աւանդապահը պէտք է աւանդի դրուած այն դրամագլուխն՝ որից այդպիսի մուտք ստացւում է իրեն վրայ առնի և դրա կիսամեայ մուտքը գործադրէ վերը յիշուած այն միւս աւանդների համար որոնք անվաւեր չը պիտի ճանաչուին, ինչպէս որ ինքը Օրինական Աւանդապահը ժամանակ առ ժամանակ յարմար կը դատէ և կը վերջաւորէ։

11. Յիշուած աւանդի դրամները պէտք է որ ապագայում ամէն ժամանակ պահուած, հաստատուած լինին Հնդկաստանի կառավարութեան արժէթղթերով, կամ երաշխաւորուած Հնդկաստանի որ և է երկաթուղային դրամագլխի թղթերով և Օրինական Աւանդապահն ազատ պիտի լինի ժամանակ առ ժամանակ յիշեալ յաւանդի դրուած դրամների հաստատութիւնը շրջելու և փոփոխելու։

12. Հրիտակողների կողմից որոշակի յայտարարուած է թէ յիշեալ աւանդները պէտք է որ միշտ մնան Օրինական Աւանդապահի և իւր յաջորդի կամ յաջորդների մօտ. որոնք որ պաշտօնի մէջ կը լինին կամ որ և է ուրիշ պաշտօնեայի մօտ, որին Կառավարութիւնը կ'ընտրէ միևնոյն պաշտօնը վարելու համար և ի դէպս եթէ այս ընծայագրի աւանդապահութիւնը որ և է ուրիշ

պաշտօնեայի և անձնի յանձնուի, աւանդի դրուած դրամները չը պէտք է որ Կալկաթայի Բարձրագոյն Դատարանի իրաւասութիւնից անջատուին։

13. Եթէ որևէ ժամանակում որևէ փոփոխութիւն տեղի ունենայ Օրինական Աւանդապահի գործողութեան մէջ և կամ որևէ ուրիշ պատճառաւ ապօրինի համարուի Օրինական Աւանդապահի համար գործելու որպէս Աւանդապահ՝ սոյն այս ընծայագրին, կամ Օրինական Աւանդապահի պաշտօնը խափանուի և այլ ևս Կառավարութեան կողմից Աւանդապահ չ'ընտրուի նոյն պաշտօնով գործելու համար, յիշեալ աւանդի դրուած դրամները որ և է հանգամանքների մէջ պէտք է որ փոխանցուին որ և է մասնաւոր անձնաւորութեան որպէս Աւանդապահ, այլ թէ պէտք է որ փոխանցուին և պահուին Կալկաթայի Նազարեթայ Հայոց Եկեղեցւոյ պաշտօնեաների, այսինքն Եկեղեցականների, կամ նոյն ժամանակուայ Յանձնաժողովի ձեռամբ հաստատուած Բարձրագոյն Դատարանի կողմից՝ մի հազար ութսուն և իններ Սեպտեմբերի երկրորդ օրը 1888 ի № 413 Դատի մէջ։ Յիշեալ աւանդի դրուած դրամները պէտք է որ հաստատուին և փոխանցուին յիշուած բոլոր նոյն ժամանակուայ պաշտօնեաների անուններով և աւանդի դրուած դրամները նոյն պաշտօնեաների ձեռքով պիտի պահուին սոյն ընծայաթղթով յայտարարուած աւանդեալ, որպէս թէ յիշեալ պաշտօնեաները ընտրուած լինէին նախկին Աւանդապահներ ի տեղի Օրինական Աւանդապահին և եթէ հնարաւոր՝ Բարձրագոյն Դատարանի մի հրամանը ձեռք է բերուելու, որը հաստատում լինի աւանդի փոխանցութիւնը յիշեալ պաշտօնեաներին։ Եւ սոսկաւ յայտարարւում է որ այս աւանդի մի պայմանն է որ ի դէպս, եթէ այս պարբերութիւնը գործադրուի. նոյն ժամանակուայ այս աւանդի դրուած դրամները ներկայացնող արժէթղթերը պէտք է որ դրուին և միշտ պահուին Բէնգալայի Դրամատան կամ ուրիշ դրամատան խնամքի ներքոյ, ուր առժամանակապէս կառավարութեան դրամները պահւում են և դրամատան ստացականները պէտք է որ պահուին Եկեղեցւոյ Աւանդատան մէջ։

14. Օրինական Աւանդապահն իրաւունք պիտի ունենայ ստանալու որպէս վարձադրութիւն՝ աւանդի գործադրութեան համար կումիսանի չափը որոշուած 1,864 ի № 17 գործողութեան 11 րդ հատուածի մէջ, իբր թէ նա ընտրուած լինէր որպէս մի աւանդապահ յիշեալ գործողութեան 10 րդ հատուածի դաշնադրութեան ներքոյ։

Վերևում յիշուած առաջին յաւելուած
Կառավարութեան Ընկալագրեր

№	116867,1865	Մայիս 1 ի	փոխանութիւնը	100 ին	3½ով	վասն	Ռուփեաց	10,000-0-0
,,	116993,1865	,,	,,	,,	,,	,,	,,	10,000-0-0
,,	102034,1865	,,	,,	,,	,,	,,	,,	2,000-0-0
,,	040301,1854	Յունիս 30 ի	,,	,,	,,	,,	,,	4,000-0-0
							Ռուփիք	26,000-0-0

Վերևում յիշուած Երկրորդ յաւելուած
Ի յիշատակ

Յարութիւն Աբգարեանի-Աւագ, որը Կալկաթայի Աբգար և Ընկ. առևտրական

հաստատութեան հիմնադիրն է եղած Տասնիններորդ Դարի սկիզբներումը և Աստուծոյ կամեցողութեամբը իւր ազգակիցների և կապակցեալների վիճակը բարձրացրած է, որոնք մեծարում են նրա յիշատակը, ծնուած յիշեալ Զուղայի մէջ Տասնուվեցերորդ դարի մէջ. վախճանուած Կալկաթայի մէջ 1863 Մայիս ամսոյ 16 րդ օրը։

Կատարինէի-յիշեալ Յարութիւն Աբգարեանի-Աւագ՝ կնոջ, վախճանուած Կալկաթայի մէջ 1850. Օգոստոս ամսոյ 28 րդ օրը։

Աբգարի՝ (Յարութիւն Աբգարի-Աւագ և Կատարինէ Աբգարեանի որդին) և իւր կնոջ Աննայի և իրենց զաւակաց։

Սէթի՝ (միւս որդի յիշեալ Յարութիւն Աբգարի-Աւագ և Կատարինէ Աբգարի) և իւր կնոջ Սարբայի։

Թովմասի՝ (միւս որդի յիշեալ Յարութիւն Աբգարի-Աւագ և Կատարինէ Աբգարի) և իւր կնոջ Մատիլդային, որ կենդանի է և իրենց զաւակաց։

Աղէքսանդրի՝ (միւս որդի յիշուած Յարութիւն Աբգարի-Աւագ և Կատարինէ Աբգարի) և իւր կնոջ Մէրիանի և իրենց զաւակաց։

Գրիգոր Աբգարի-Աւագ, յիշեալ Յարութիւն Աբգարեանի-Աւագ, եղբօր, որ գլխաւորաբար օգնեց իրեն հիմնելու Աբգար և Ընկ. հաստատութիւնը, վախճանուած Կալկաթայի մէջ 1847. Յունիս 22 ին։

Խաչխաթունի, յիշեալ Գրիգոր Աբգարի-Աւագ, այրոյն վախճանուած Կալկաթայի մէջ 1863. Ապրիլի 3 ին և իրենց զաւակաց

Եւ

Աբգար Աղազար Սէթի և իւր կնոջ Սանդուխտի, երկուքը ևս վախճանուած Զուղայի մէջ, Տասնիններորդ Դարի սկզբներումը, յիշեալ Յարութիւն և Գրիգոր Աբգարի ծնողաց։

Անդրէաս Ծատուր Աբգարի

Եւ

Սիմէօն Ստեփաննոսի և իւր այրի Եղիսաբեթի և իրենց զաւակաց,

Ի վկայութիւն որոյ յիշեալ խումբը իրենց առանձին ձեռքերը և կնիքները դրած են վերևում գրուած օրուայ և տարուայ մէջ։

Ստորագրուած, կնքուած և յանձնուած վերևում յիշուած Յարութիւն Գրիգոր Աբգարի ձեռքով ի ներկայութեան (Ստոր.) Յ. Գ. Աբգար

(Ստ.) Կ. Մ. Դընկան
Օգնական.

(Ստ.) Ս. Ստեփաննոս
Օգնական.

Հասուրահ
Աբգար և Ընկերութիւն
155 Լօբը Սըրկիւլըր փողոց
Կալկաթա

Աբգար և Ընկ.

Ստորագրուած, կնքուած և յանձնուած, վերևում յիշուած Աբգար Աղէքսանդր Աբգարի ձեռքով ի ներկայութեան

(Ստ.) Ա. Ա. Աբգար

(Ստ.) Կ. Մ. Դընկան
Օգնական

(Ստ.) Ս. Ստեփաննոս
Օգնական

Աբգար և Ընկերութիւն
155 Լօբը Սըրկիւլըր փողոց
Կալկաթա

Աբգար և Ընկ.

Ստորագրուած, կնքուած և յանձնուած վերևում յիշուած Ալբերտ Բըրմինգհամ Միլլերի ձեռքով ի ներկայութեան

(Ստ.) Մոհենդրո Նաթ Դաս
Բէնգալայի
Օրինական Աւանդապահի
Քարտուղար

(Ստ.) Ա. Բ. Միլլեր
Բէնգալայի Օրինական Աւանդապահ

Ստացեալ յիշեալ Յարութիւն Գրիգոր Աբգարեանից և Աբգար Աղեքսանդր Աբգարեանից ներքոյիշեալ արժէթղթերը որոնք իմ անունով փոխադրուած.—

№. 116867,1865 Մայիս 1 ի փոխառութիւնը 100ին 3½ով վասն Ռուփեաց 10,000—
,, 116993 ,, ,, ,, ,, ,, ,, ,, ,, 10,000—
,, 102034 ,, ,, ,, ,, ,, ,, ,, ,, 2,000—
,, 040301,1854 Յունիս 30 ի ,, ,, ,, ,, ,, 4,000—
Ռուփիք 26,000—

Կալկաթա
21 Դեկտեմբերի 1899

(Ստ.) Ա. Բ. Միլլեր
Բէնգալայի Օրինական Աւանդապահ.

Էջ 257
4 ըդ.

Ներկայացուած արձանագրութեան համար Տասն և երկու (Կ. Յ.) և մի (Կ. Յ.) ժամերի մէջ, 1899, Դեկտեմբերի քսան երկուերրորդ օրուայ մէջ, Կալկաթայի Դիւանատանը Պարոն Յ. Գ. Աբգարեանի ձեռքով Կալկաթայի վաճառական, կտակող, անձամբ այստեղ ճանաչուած:

(Ստ.) Յ. Գ. Աբգար

(Ստ.) Պրատապ Չընդրա Գոշ
Դիւանապետ 22—12—1899.

Կտակատարութիւնը ընդունուեցաւ վերևում յիշուած կտակողի ձեռքովը.

(Ստ.) Յ. Գ. Աբգար

(Ստ.) Պրատապ Չընդրա Գոշ
Դիւանապետ 22—12—1899.

Կտակատարութիւնը ընդունուեցաւ 1900.Յունուարի չորրորդ օրումը.Կալկաթայի Դիւանատանը Ա.Ա.Աբգարեանի ձեռքով, վաճառական, կտակող անձամբ ճանաչուած.

(Ստ.) Ա. Ա. Աբգար

(Ստ.) Պրատապ Չընդրա Գոշ
Դիւանապետ 4—1—1900,

Գործողութիւնը Բէնգալայի Օրինական Աւանդապահ Ա. Բ. Միլլերի Ձեռքովը, որը ազատ է անձամբ ներկայանալուց սոյն գործատան մէջ 1877ի 3 ըդ. գործողութեան 88 հատուածի զօրութեամբ, հաստատուած է իւր ստորագրութեամբը:

(Ստր.) Պրատապ Չընդրա Գոշ
Դիւանապետ 4—1—1900

Արձանագրուած 4 ըդ. դրքի երրորդ հատորի մէջ էջ 1ից մինչև 16. լինելով № 3. 1900ի համար:

Կալկաթայի Դիւանապետի կնիքը.
(Ստր.) Պրատապ Չընդրա Գոշ.
Դիւանապետ, Կալկաթա 11—1—1900.

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL030141